ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 մարտի 2019թ. թիվ 132-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼ ԵՎ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018թ. հուլիսի 17-ի «2019 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին» թիվ 26-Ա որոշման՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2019թ. հունիսի 09-ին նշանակել Լոռու մարզի Ղուրսալ և Խնկոյան համայնքների ավագանու հերթական ընտրություններ և սահմանել այդ համայնքների նորընտիր ավագանու կողմից լիազորությունների ստանձնման ժամկետները՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝ սույն որոշման մասին ծանուցել Ղուրսալ և Խնկոյան համայնքների ներկայիս և նորընտիր տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. մարտի 28
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2019թ. մարտի 28-ի
թիվ 132-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՍԱԼ ԵՎ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Հ/հ	Համայնքի անվանումը	Համայնքի նորընտիր ավագանու կողմից լիազորությունների ստանձնման ժամկետը
1	Ղուրսալ	02.09.2019թ.
2	Խնկոյան	23.07.2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Invalid signature

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ